2018 ԹՎԱԿԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Բովանդակություն

1. Ընդհանուր նկարագրություն
2. Ֆինանսական կարիքն ու պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները
3. Պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը
4. Կառավարության պարտքի մարումն ու սպասարկումը
5. Կառավարության պարտքը 2018 թվականի տարեվերջին

1. Ընդհանուր նկարագրություն

2018 թվականի փոխառությունների տարեկան ծրագիրը մշակվել է կառավարության պարտքի կառավարման 2018-2020թթ. ռազմավարական ծրագրի նպատակադրումներին ու ուղենշային ցուցանիշներին համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ 2018թ. պետական բյուջեի կազմման համար կիրառված մակրոտնտեսական շրջանակն ու ցուցանիշները:

ՀՀ կառավարությունը 2018 թվականից անցում է կատարել կանոնների վրա հիմնված հարկաբյուջետային քաղաքականության՝ նպատակ ունենալով տնտեսության խթանման և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման գործում բարձրացնել հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը և միաժամանակ ապահովել պարտքի կայունությունը: Այդ նպատակով մշակվել և ներդրվել են հարկաբյուջետային նոր՝ առավել ճկուն ու համապարփակ, ՀՀ տնտեսության ներկա բնութագրիչներին համահունչ մոտեցումներ և կանոններ, որոնք դրվել են ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման հիմքում:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական ցուցանիշները.

Ցուցանիշներ	*2018թ.*
ՀՆԱ, մլրդ դրամ	5,850.7
Իրական աճ, %	4.5
ՀՆԱ-ի դեֆլյատոր, %	3.5
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	1,308.3
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	1,465.2
Պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	(156.9)
Պետական բյուջեի պակասուրդ, %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	(2.7)
Փոխարկումների համար կիրառված ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեք	483.06

2. Ֆինանսական կարիքն ու պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի հիմքում դրված ցուցանիշների համաձայն՝ համախառն ֆինանսական կարիքը կկազմի 364.1 մլրդ դրամ, մասնավորապես.

Ցուցանիշներ, մլրդ դրամ	*2018թ.*
Առաջնային պակասուրդ	15.7
Պարտքի սպասարկման ծախսեր (տոկոսավճար)	141.2
Պարտքի գծով մարումներ	185.6
Ֆինանսական զուտ ակտիվներ և մուրհակների մարում	21.6
Ընդամենը	**364.1**

Նախատեսվում է համախառն ֆինանսական կարիքի 44.8 տոկոսը ապահովել ներքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների հաշվին, իսկ 55.2 տոկոսը՝ արտաքին փոխառությունների հաշվին: Այսպես՝ դրա իրագործման նպատակով կիրականացվի 166 մլրդ դրամի պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխում, որից մուտքը կկազմի 163 մլրդ դրամ, և արտաքին աղբյուրներից ներգրավված վարկերի գծով կիրականացվի 201.1 մլրդ դրամի ֆինանսավորում:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի պակասուրդը կկազմի 156.9 մլրդ դրամ, որի ֆինանսավորման աղբյուրները հետևյալն են.

Ցուցանիշներ, մլրդ դրամ	*2018թ.*
Ընդամենը պակասուրդ	**156.9**
այդ թվում՝	
Ներքին աղբյուրներ	**77.0**
որից	
Փոխառու զուտ միջոցներ	**46.0**
գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր	163.0
գանձապետական պարտատոմսերի մարում / հետգնում	(116.0)
մուրհակների մարում	(1.0)
Ֆինանսական զուտ ակտիվներ	**31.0**
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	(40.8)
ելքերի ֆինանսավորմանն ուղղվող ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներ	31.9
կայունացման դեպոզիտային հաշվից օգտագործում	39.9
Արտաքին աղբյուրներ	**79.9**
որից	
Փոխառու զուտ միջոցներ	**131.5**
վարկերի և փոխատվությունների ստացում	201.1
ստացված վարկերի և փոխատվությունների մարում	(69.6)
Ֆինանսական զուտ ակտիվներ	**(51.6)**
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	(50.8)
բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում	(0.8)

2018 թվականին պետական բյուջեի պակասուրդը նախատեսվում է ֆինանսավորել ներքին և արտաքին աղբյուրների հաշվին գրեթե հավասարաչափ (49/51 հարաբերակցությամբ): Ընդ որում ներքին աղբյուրների հաշվին նախատեսված 77.0 մլրդ դրամի զուտ ֆինանսավորման 61.1 տոկոսը (47.0 մլրդ դրամ) կֆինանսավորվի պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին: Իսկ արտաքին աղբյուրների հաշվին նախատեսված 79.9 մլրդ դրամի զուտ ֆինասավորման դիմաց ակնկալվում է զուտ ներգրավել 131.5 մլրդ դրամի նոր փոխառություններ արտաքին վարկերի գծով:

3. Պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը

2018 թվականին պետական բյուջեի պակասուրդը նախատեսվում է փոխառու միջոցների հաշվին ֆինանսավորել 178.5 մլրդ դրամի չափով, ինչը կիրականացվի պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 47 մլրդ դրամ, և արտաքին վարկերի հաշվին՝ 131.5 մլրդ դրամ:

Նշենք, որ կառավարության պարտքի կառավարման 2018-2020թթ. ռազմավարական ծրագրով 2018 թվականին նախատեսվում էր պետական բյուջեի պակասուրդը փոխառու միջոցների հաշվին ֆինանսավորել 231.8 մլրդ դրամի չափով, ընդ որում պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 47.0 մլրդ դրամ, և արտաքին վարկերի հաշվին՝ 184.8 մլրդ դրամ: Ֆինանսավորման ծավալների տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պահպանելով 2018թ. պետական բյուջեի պակասուրդի ընդհանուր մակարդակը 156.9 մլրդ դրամի չափով՝ փոփոխություն է կատարվել ֆինանսավորման աղբյուրների միջև: Այսպես՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեի համաձայն՝ ավելացվել է ներքին աղբյուրներում ֆինանսական զուտ ակտիվների հաշվին ֆինանսավորումը 51 մլրդ դրամով (վարկերի և փոխատվությունների զուտ տրամադրումը 11 մլրդ դրամով, կայունացման դեպոզիտային հաշվից օգտագործումը 40 մլրդ դրամով), և համապատասխանաբար նվազեցվել է արտաքին աղբյորներից ֆինանսավորման ծավալը, մասնավորապես 53.3 մլրդ դրամով նվազեցվել է արտաքին վարկերի հաշվին զուտ ֆինանսավորումը:

3.1. Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով

Պետական գանձապետական պարտատոմսերով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է կարճաժամկետ (3, 6, 9 և 12 ամիս), միջնաժամկետ (3 և 5 տարի), երկարաժամկետ (10 և 30 տարի) և խնայողական պարտատոմսերի հաշվին:

Յուրաքանչյուր երկու ամիսն առնվազն մեկ անգամ կկազմակերպվի 52, 39, 26 և 13 շաբաթ մարման ժամկետ ունեցող պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդներ: Կարող են իրականացվել նաև պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ կարող են իրականացվել կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում:

2018 թվականի ապրիլի 29-ին կթողարկվեն 3 և 5 տարի մարման ժամկետայնությամբ նոր միջնաժամկետ պետական գանձապետական պարտատոմսեր:

Աճուրդների կողմնորոշիչ ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի եռամսյակային կտրվածքով:

Յուրաքանչյուր աճուրդին տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալների (միջակայքի) և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի աճուրդից առաջ՝ գործակալների հետ խորհրդակցելուց հետո:

2018 թվականի ընթացքում կիրականացվեն նաև պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումներ: 2018 թվականի ընթացքում պարտատոմսերի հետգնումների 70-80% կիրականացվեն մարման գրաֆիկի հարթեցման, իսկ 20-30%՝ պարտատոմսերի իրացվելիությունը խթանելու նպատակով: ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի (on-the-run) հետգնում չի իրականացնում:

ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք էջում եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ, կհրապարակի ուղենշային համարվող պարտատոմսերի ցանկը:

Ստորև ներկայացված է պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների օրացույցը:

Հունվար 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
1	1	2	3	4	5	6	7
2	8	9	10	11	12	13	14
3	15	16	17	18	19	20	21
4	22	23	24	25	26	27	28
5	29	30	31				

Փետրվար 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
5				1	2	3	4
6	5	6	7	8	9	10	11
7	12	13	14	15	16	17	18
8	19	20	21	22	23	24	25
9	26	27	28				

Մարտ 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
9				1	2	3	4
10	5	6	7	8	9	10	11
11	12	13	14	15	16	17	18
12	19	20	21	22	23	24	25
13	26	27	28	29	30	31	

Ապրիլ 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
13							1
14	2	3	4	5	6	7	8
15	9	10	11	12	13	14	15
16	16	17	18	19	20	21	22
17	23	24	25	26	27	28	29
18	30						

Մայիս 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
18		1	2	3	4	5	6
19	7	8	9	10	11	12	13
20	14	15	16	17	18	19	20
21	21	22	23	24	25	26	27
22	28	29	30	31			

Հունիս 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
22					1	2	3
23	4	5	6	7	8	9	10
24	11	12	13	14	15	16	17
25	18	19	20	21	22	23	24
26	25	26	27	28	29	30	

Հուլիս 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
26							1
27	2	3	4	5	6	7	8
28	9	10	11	12	13	14	15
29	16	17	18	19	20	21	22
30	23	24	25	26	27	28	29
31	30	31					

Օգոստոս 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
31			1	2	3	4	5
32	6	7	8	9	10	11	12
33	13	14	15	16	17	18	19
34	20	21	22	23	24	25	26
35	27	28	29	30	31		

Սեպտեմբեր 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
35						1	2
36	3	4	5	6	7	8	9
37	10	11	12	13	14	15	16
38	17	18	19	20	21	22	23
39	24	25	26	27	28	29	30

Հոկտեմբեր 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
40	1	2	3	4	5	6	7
41	8	9	10	11	12	13	14
42	15	16	17	18	19	20	21
43	22	23	24	25	26	27	28
44	29	30	31				

Նոյեմբեր 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
44				1	2	3	4
45	5	6	7	8	9	10	11
46	12	13	14	15	16	17	18
47	19	20	21	22	23	24	25
48	26	27	28	29	30		

Դեկտեմբեր 2018							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
48						1	2
49	3	4	5	6	7	8	9
50	10	11	12	13	14	15	16
51	17	18	19	20	21	22	23
52	24	25	26	27	28	29	30
1	31						

Պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր

Պետական գանձապետական միջնաժամկետ պարտատոմսեր

Պետական գանձապետական երկարաժամկետ պարտատոմսեր

Շուկայական իրավիճակից ելնելով՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, գործակալների հետ խորհրդակցելու արդյունքում, կարող է փոփոխել ներկայացված օրացույցը կամ չեղարկել աճուրդի օրերը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ելնելով փոխառության կարիքից և շուկայի միտումներից, կարող է հայտարարել լրացուցիչ աճուրդի օրեր: Վերջնահաշվարկը, որպես կանոն, իրականացվում է աճուրդի հաջորդ աշխատանքային օրը (T+1):

3.2. Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով

2018 թվականին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 198.3 մլրդ դրամի (410.6 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ[1]: Ընդ որում բյուջետային աջակցության վարկերի գծով մասհանումները կկազմեն 47.6 մլրդ դրամ (98.5 մլն ԱՄՆ դոլար) և 150.7 մլրդ դրամ (312.1 մլն ԱՄՆ դոլար)՝ նպատակային վարկային ծրագրերի գծով:

2018 թվականին մասհանումների շուրջ մեկ երրորդը (30.5%) կատարվելու է ռուսական վարկերի գծով: Հաջորդ խոշոր մասնաբաժինը (26.1%) բաժին է ընկնում Ասիական Զարգացման Բանկին: Համաշխարհային բանկի (ՎԶՄԲ և ԶՄԸ) տեսակարար կշիռը կկազմի 18.0%: Ըստ վարկատուների մասհանումների կառուցվածքը հետևյալն է.



2018 թվականին նպատակային վարկային ծրագրերի գծով մասհանումների կառուցվածքում խոշորագույներն են Հայկական ատոմակայանի վերականգնման ծրագիրը՝ 114.2 մլն ԱՄՆ դոլար, և Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի ծրագիրը՝ 34.1 մլն ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ, ըստ ոլորտների մասհանումների կառուցվածքը հետևյալն է.

[1] Արտաքին վարկերի գծով պակասուրդի ֆինանսավորման և արտաքին վարկերից մասհանումների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:



2018 թվականին մասհանումների գերակշիռ մասը (69.7%) կկատարվի ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի գծով:



4. Կառավարության պարտքի մարումը և սպասարկումը

2018 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 326.8 մլրդ դրամ, որից 185.6 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 141.2 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

մլրդ դրամ	*Մարում*	*Տոկոսավճար*	***Ընդամենը***
Պետական գանձապետական պարտատոմսեր	116.0[2]	62.3	**178.3**
Արտարժութային պետական պարտատոմսեր	-	31.8	**31.8**
Արտաքին վարկեր	69.6	47.1	**116.7**
Ընդամենը	**185.6**	**141.2**	**326.8**

[2] Ցուցանիշը ներառում է պետական գանձապետական պարտատոմսերի հետգնման համար նախատեսված 20.0 մլրդ դրամը:



Պետական գանձապետական պարտատոմսերի մարման համար նախատեսված 116 մլրդ դրամի մեջ 20 մլրդ դրամը կազմում է պարտատոմսերի հետգնումների համար ծրագրավորված գումարը:

Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 116.7 մլրդ դրամ (241.5 մլն ԱՄՆ դոլար): Նախատեսվող վճարումների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է.

մլն ԱՄՆ դոլար	**տոկոսավճար**	**մարում**	**ընդամենը**
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	21.4	1.4	**22.7**
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	24.0	47.0	**71.0**
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	0.9	3.3	**4.3**
Եվրոպական Ներդրումային Բանկ	2.3	0.9	**3.2**
Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ	0.5	2.1	**2.7**
ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ	2.3	3.3	**5.6**
Ասիական Զարգացման Բանկ	18.7	16.4	**35.1**
Եվրամիություն	2.6	-	**2.6**
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	-	28.9	**28.9**
Եվրասիական Զարգացման Բանկ	6.6	-	**6.6**
Գերմանիա (ՎՎԲ)	4.6	7.0	**11.6**
Ռուսաստանի Դաշնություն	8.6	20.2	**28.8**
Ֆրանսիա	1.7	0.2	**1.9**
ԱՄՆ	0.4	1.8	**2.1**
Ճապոնիա	2.0	10.0	**12.0**
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	0.2	0.7	**0.9**
Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	0.5	-	**0.5**
ԿԲՍ Բանկ (Բելգիա)	0.04	0.6	**0.6**
Ռայֆայզն Բանկ (Ավստրիա)	0.1	-	**0.1**
Եռստե Բանկ (Ավստրիա)	0.2	0.2	**0.4**
Ընդամենը	**97.5**	**144.0**	**241.5**

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը 2018 թվականին կկազմեն 65.8 մլն ԱՄՆ դոլար և ներառում են շրջանառության մեջ գտնվող 2020 ու 2025 թվականներին մարման ենթակա պարտատոմսերի գծով արժեկտրոնային վճարումները:

5. Կառավարության պարտքը 2018 թվականի տարեվերջին

ՀՀ 2018թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կկազմի 3,173 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 54.2 տոկոսը:

	Առ 31.12.2018թ.
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	**3,173**
ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար	**6,568**
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ի նկատմամբ	**54.2**

2018 թվականի տարեկան փոխառությունների ծրագրի իրականացման արդյունքում ուղենշային ցուցանիշները կգտնվեն ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2018-2020 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված շրջանակներում և աննշան կշեղվեն ռազմավարական ծրագրով 2018 թվականի համար կատարված կանխատեսումներից:

	Ուղենիշ	2018թ. (պետբյուջե)	2018թ. (2018-2020թթ. ռազմ.)
Վերաֆինանսավորման ռիսկ			
Մինչև մարում միջին ժամկետը	**8 – 11 տարի**	8.5 տարի	8.6 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	**առավելագույնը 20%**	14.2%	14.5%
Տոկոսադրույքի ռիսկ			
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	**առնվազն 80%**	83.9%	83.6%
Փոխարժեքի ռիսկ			
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	**առնվազն 20%**	20.8%	20.7%

2018 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 4.7%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը կկազմեն ՀՆԱ-ի 2.4%-ը և պետական բյուջեի ընդամենը ծախսերի 9.6%-ը:

Նախատեսվում է 2018 թվականի փոխառությունների տարեկան ծրագրի իրականացման արդյունքում ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում կավելացվի ՀՀ դրամով տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի կշիռը, որն ըստ կանխատեսումների կկազմի 18.9%: Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.



2018 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.